# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պռոշյան, Անդրանիկի 13

## ՈՐՈՇՈՒՄ

02 նոյեմբերի 2018թ. թիվ 152

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ պարբերության 9, 10 , 11 13,22.1-րդ կետերով ու հաշվի առնելով այն հանգամանքը,որը ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,որ չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և հիմք ընդունելով Ջորջ Սաքունցյանի և Լինա Սաքունցյանի լ/ա Աշխեն Սամվելյանի 30.10.2018 թ. դիմումը .

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Ջորջ Սաքունցյանի և Լինա Սաքունցյանի խնդրանքը և նրանց պատկանող Պռոշյան համայնքի Վանահովիտ փողոց Թիվ 45 հասցեում գտնվող կադաստրային ծածկագիր <07-053- 0378-0132 > 0.05 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված /արտաքին մակերեսով / 225.779 քմ /ներքին մակերեսը 194.25 քմ/ բնակելի տան և 3 քմ աստիճանվանդակի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը :

2.<< Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 13 կետի /ա/ և /բ/ ենթակետերի պահանջներով բնակելի տան յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 225.779 քմ x2600 դրամ =587025.4 ՀՀ դրամ, իսկ աստիճանավանդակի համար 3քմ x 1560 դրամ =4680.0 դրամ, որը պետք է մուծվի Պռոշյան համայնքի /900115107063/ հաշվեհամարին 60 օրյա ժամկետում:

3.Չվճարման դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4.Կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ.Աղամյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018թ. նոյեմբերի 02
Պռոշյան համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պռոշյան, (0224) 6-39-39, proshyan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 նոյեմբեր 2018 թվականի N 151

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԺԱՄԸ 24-00-ԻՑ ՀԵՏՈ ԱՇԽԱՏԵԼՈՒ, ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածով, Պռոշյան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 52-Ն որոշման և հիմք ընդունելով <<ՄՄ >> ՍՊԸ-ի տնօրինության կողմից ներկայացված հայտը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. <<ՄՄ>> ՍՊԸ-ի <<Միրաժ>> դիսկո ակումբին

համաձայն իր հայտում նշված ժամանակահատվածի՝ 2018թ համար տրամադրել համայնքի տարածքում ժամը 24-00-ից հետո աշխատելու, ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Ցուրիկ Ոզգոյանի վրա:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թ. սեպտեմբեր 25
գ.Պռոշյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Պռոշյան, (0224) 6-39-39, proshyan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 նոյեմբեր 2018 թվականի N 150

### <<ՄՄ >> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ <<ՄԻՐԱԺ>> ԴԻՍԿՈ ԱԿՈՒՄԲԻՆ ԳՈՎԱԶԴԱՅԻՆ ՎԱՀԱՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գովազդի մասին>> օրենքի 11-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Պռոշյան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 52-Ն որոշումը, և <<ՄՄ >> ՍՊԸ-ի տնօրինության կողմից ներկայացված հայտը

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Թույլատրել <<ՄՄ>> ՍՊԸ-ին տեղադրել գովազդային վահանակներ $5մ^2$ մակերեսով Պռոշյան համայնքում Գևորգ Չաուշի փողոցի տարածքում:
2. Ձև N 1 թույլտվությունը տալ տեղական տուրքի վճարման անդորրագրի առկայության դեպքում:
3. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ՝ Յուրիկ Ոգգոյանի վրա:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018 թ. նոյեմբերի 1
գ.Պռոշյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Անդրանիկի 13, էլ. հասցե՝ proshyan.kotayq@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 149

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի ԹԻՎ 139 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի դրույթներով

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Պռոշյան համայնքի ղեկավարի 2018 թվականի հոկտեմբերի 5-ի <<Բազմաբնակարան կամ ստորաբաժանված շենքերի բնակարանների եվ ոչ բնակելի տարածքների ինքնակամ շինությունների օրինականացման մասին>> թիվ 139 որոշման 2-րդ մասում լրացնել <<նույն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի /ա/ ենթակետի համաձայն օրինականացվում է շենքում առկա բոլոր ինքնակամ կառույցները>> նախադասությունը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

20 18թ. հոկտեմբերի 31
գ. Պռոշյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

25. հոկտեմբերի 2018թ թիվ 148

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՎԵԼ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով դրամական օգնություն տրամադրելու նպատակով ներկայացված դիմումները և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները, Պռոշյան համայնքի ավագանու 2017թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 32 որոշումն ու աշխատանքի և սոցիալական ծառայության վերաբերյալ հարցեր քննող հանձնաժողովի եզրակացությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ներքոհիշյալ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն

| | Անուն Ազգանուն | Գումարի չափ |
|---|---|---|
| 1 | Էլմիրա Գասպարյան | 30.000 դրամ |
| 2 | Արմենակ Ղազարյան | 50.000 դրամ |
| 3 | Թերեզա Հովհաննիսյան | 20.000 դրամ |
| 4 | Հովհաննես Համբարձումյան | 50.000 դրամ |
| 5 | Մհեր Ավետիսյան | 60.000 դրամ |
| 6 | Սոֆյա Հարությունյան | 30.000 դրամ |
| 7 | Գոռ Բաբայան | 60.000 դրամ |
| 8 | Ցոլիկ Տիգրանյան | 20.000 դրամ |
| 9 | Արթուր Ենոքյան | 40.000 դրամ |
| 10 | Սուսաննա Հակոբյան | 40.000 դրամ |
| | ընդամենը | 400.000 դրամ |

Համայնքի ղեկավար Ա.Մուրադյան

2018թ հոկտեմբերի 25-ին
Պռոշյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

25.հոկտեմբերի 2018թ թիվ 157

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017թ սեպտեմբերի 13-ի թիվ 32 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ներքոհիշյալ հանգուցյալների ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն

| | Անուն Ազգանուն | Գումարի չափ |
|---|---|---|
| 1 | Գեղեցիկ Հովհաննիսյան | 50.000 դրամ |
| 2 | | |
| 3 | | |
| 4 | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | ընդամենը | 50.000 դրամ |

Համայնքի ղեկավար Ա.Մուրադյան

2018թ հոկտեմբերի 25-ին
Պռոշյան համայնք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պռոշյան, Անդրանիկի 13

## ՈՐՈՇՈՒՄ

24 դեկտեմբերի 2018թ. թիվ 146

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ-ի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ պարբերության 9, 10 , 11 13,22.1-րդ կետերով ու հաշվի առնելով այն հանգամանքը,որը ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,որ չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Մելքոն Մելքոնյանի խնդրանքը և նրան պատկանող Պռոշյան համայնքի Վանահովիտ փողոց Թիվ 48 հասցեում գտնվող կադաստրային ծածկագիր <07-053- 0378-0159 > 0.0137 հա հողամասի վրա ինքնակամ կառուցված /արտաքին մակերեսով / 194.52 քմ /ներքին մակերեսը 140.09 քմ/ բնակելի տան նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը :

2.<< Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 13 կետի /ա/ ենթակետի պահանջներով բնակելի տան յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 54.43 քմ x2600 դրամ =141518.0 ՀՀ դրամ որը պետք է մուծվի Պռոշյան համայնքի /900115107063/ հաշվեհամարին 60 օրյա ժամկետում:

3.Չվճարման դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4.Կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ.Աղամյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018թ. դեկտեմբերի 24
Պռոշյան համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Պռոշյան համայնք Անդրանիկի 13

# ՈՐՈՇՈՒՄ

24 նոյեմբերի 2018թ. թիվ 145

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ / ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍՏՂԻԿ Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ/ ՀՈԱԿ –ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՄՇՏԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով /Տեղական ինքնակառավարման մասին / օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով , Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի և Պռոշյան գյուղական համայնքի ավագանու 2018 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 38 որոշման պահանջներով.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Պռոշյան գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող վկ. 2492058 կադաստրային ծածկագիր 07-053-0078-0005 0.3703 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը և 991.7 քմ մանկապարտեզի շենք-շինությունները , որը գտնվում է Պռոշյան համայնք ԳԱՄ-ի փողոց թիվ 4 հասցեում անհատույց, մշտական օգտագործման իրավունքով տրամադրել համայնքային ենթակայության / Աստղիկ մ/մանկապարտեզ/ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը:
2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ.Աղամյանին վերահսկել որոշման կատարման ընթացքը :
3.Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2018թ. նոյեմբերի 24
Պռոշյան համայնք